Արձանագրություն N 3

«ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Կապան «05» հունիս 2019թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Վիրաբ Մանասյան
հանձնաժողովի անդամներ՝ Սարիկ Աթաջանյան
Ասատուր Ասատրյան
Նաիրա Մարգարյան
Լարիսա Հովհաննիսյան
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան

<u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին</u>

1. Ընդունել ի գիտություն.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Երմեդ»ՍՊԸ-ը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը՝ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.1. Ընտրված մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի համաձայն առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2. Հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին տրամադրել է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը:

1.3. Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

2. <u>Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին</u>

2" Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և «Երմեդ»ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

3. «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ- 19/4» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

3" Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարվում «Երմեդ»ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4. Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը «Երմեդ»ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ №1; 2; 3; 7; 8; 9; 10; 11 և 12 չափաբաժինների համար:

4.1" Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, անգործության ժամկետ չսահմանել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վիրաբ Մանասյան

Անդամ՝ _____ Սարիկ Աթաջանյան

_____ Ասատուր Ասատրյան

_____ Նաիրա Մարգարյան

_____ Լարիսա Հովհաննիսյան

Քարտուղար՝ _____ Սահականուշ Գրիգորյան